

Տնտեսական դատավարություն

ՄՐՅԱԿՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ\*

ԸՍՏ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ ԼԱԽԱԳԾԻ



Մրցակցային դատավարությունում դատարանի ամենակարևոր խնդիրներից մեկը կողմերին և գործին մասնակցող այլ անձանց ապացույցների ներկայացման հարցում օժանդակելն է: Ընդհանուր կանոնի համաձայն, դատարանը կարող է գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա պահանջել ապացույցներ, սակայն վարչական և այլ հանրային իրավահարաբերություններից ծագող գործերի քննության դեպքում դատարանը կարող է նախաձեռնություն հանդես բերել և պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ մարմիններից ու պաշտոնատար անձանցից ինքնուրույն պահանջել ապացույցներ՝ դրանք նշված մարմինների կողմից չներկայացվելու դեպքում: Ստանալով նման ձևով պահանջված փաստաթղթերը՝ դատարանը պարտավոր է դրանց պատճենները ուղարկել կողմերին և այլ անձանց կամ գործին մասնակցող անձանց այլ ձևով ծանոթացնել դրանց հետ:

Տնտեսական դատարանն իրավասու է իր նախաձեռնությամբ որպես վկա կանչել գրավոր ապացույցի կազմմանը, իրեղեն ապացույցի ստեղծմանը կամ փոփոխմանը մասնակցած անձին:

Չնայած գործի քննության շրջանակներում տնտեսական դատարանի նախաձեռնությունն ունի որոշակի սահմաններ, նրա դերը մրցակցային դատավարության պայմանների ապահովման մեջ բացառիկ կարևոր է: Հատկապես դատարանն է հանդիսանում ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության ոլորտում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, օրենքով սահմանված ժամկետներում արդար հրապարակային դատական քննության երաշխավորը: Նրա վրա են դրված օրինականության ամրապնդման և արդարադատության մատչելիության ապահովման խնդիրները: Ընդ որում, քանի որ մրցակցային դատավարության կոնցեպցիան նախատեսում է դատավարության կողմերի ակտիվություն և ինքնուրույնություն, դատարանը միշտ ակտիվ է, այն վերահսկում է գործին մասնակցող անձանց գործունեությունը՝ չբույլատրելով նրանց կողմից իրենց դատավարական իրավունքների չարաշահում:

Մրցակցային դատավարության կարևոր տարր է հանդիսանում կողմերին ճանաչված (ընդունված) հանգամանքների ապացուցումից ազատելը, քանի որ անմիջականորեն շոշափում է գործի հանգամանքների ապացուցման ոլորտը: Եթե կողմերը, գործի որոշակի հանգամանքների հետ կապված, հասնում են համաձայնության, կամ եթե կողմերից մեկն ընդունում է այն հանգամանքները, որոնք ընկած են մյուս կողմի պահանջների և առարկությունների հիմքում, ապա ընդունված հանգամանքները կարիք չունեն հետագա ապացուցման: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ տվյալ կանոնը չի նշանակում կողմի բուն պահանջների կամ առարկությունների ընդունում: Ընդունված հանգամանքները դառնում են փաստեր, որոնք ենթակա չեն հետագա ապացուցման միայն տնտեսական դատարանի կողմից այդ հանգամանքների կողմի (կողմերի) ճանաչման (ընդունման) դեպքում: Նախագիծը սահմանում է տնտեսական դատարանի կողմից հանգամանքների կողմերի ճանաչման (ընդունման) պայմանները: Այդպիսի ճանաչումը պետք է ամրագրվի գրավոր ձևով և չպետք է ձեռք բերված լինի խաբեության, բռնության, մոլորության մեջ գցելու միջոցով կամ կատար-



Հովհաննես ՄԵԼՈՒԿՅԱՆ «Տնտեսական դատարանի մայրուղան»

ված լինի իրական փաստերը թաքցնելու նպատակով: Հակառակ դեպքում, հանգամանքները ենթակա են ընդհանուր հիմունքներով ապացուցման:

Որոշակի պահանջներ ներկայացվում են նաև ապացուցման միջոցներին: Այդ պահանջներից շատերը տնտեսական դատավարության օրենսգրքի նախագիծ «փոխանցվեցին» 1995թ. ՌԴ ԱԴՕ-ից, բայց ձևակերպված են հստակեցված խմբագրությամբ: Դրանք ապացույցների վերաբերելության և բույլատրելիության, նախադատելիության և

ապացույցների գնահատման պահանջներն են: Նախագծում ամրագրվել է կանոն, համաձայն որի՝ տնտեսական դատարանը չի կարող փաստը, որը հաստատվում է միայն փաստաթղթի կամ այլ գրավոր ապացույցի պատճենով, ապացուցված համարել, եթե գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված այդ փաստաթղթի պատճենները նույնական չեն, իսկ բնօրինակը կորսվել է կամ չի ներկայացվել դատարան:

«Դատավարական մրցակցությունն անկանոն, քառսային պայքար չէ... այն միշտ ենթակա է որոշակի ռեժիմի, այն կարգավորված է»<sup>5</sup>: Հատկապես այդ պատճառով նախագիծը մանրամասն կանոնակարգում է դատական քննության ընթացքը, դրա մեջ առանձնացնում է փուլեր, սահմանում է որոշակի կարգ: Այդ կարգը կողմերին երաշխավորում է իրենց տեսակետներն առավել լրիվ հիմնավորելու հնարավորությունը և դրա հետ միասին սահմանափակում է կողմերի՝ իրենց դատավարական իրավունքների չարաշահումը, դատարանի կողմից գործի լրիվ և բազմակողմանի քննության համար ստեղծում է պայմաններ: Սրա հետ կապված, դատարանի վրա դրվում է նաև դատավարության բոլոր մասնակիցների կողմից դատաքննության սահմանված կարգի պահպանության ապահովման խնդիրը:

Պայմանավորված նրանով, որ հայցվորն է նախաձեռնում դատավարությունը, և նրա շահերի պաշտպանությունն իրականացվում է պետության կողմից՝ դեմս դատարանի, պատասխանողին՝ որպես դատավարության ավելի թույլ մասնակցի, ընձեռվում են իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ հնարավորություններ: Գործով վարույթի հարուցումն ունի որոշակի հետևանքներ. կոնկրետ անձն ստանում է գործին մասնակցող անձի կարգավիճակ և դառնում է դատավարական ֆիզուր՝ պատասխանող, նրա մոտ առաջանում են ոչ միայն իրավունքներ, այլև պարտականություններ: Պատասխանողը կարող է պաշտպանվել հիմնականում երկու եղանակով: Նա կարող է զբաղեցնել պաշտպանվողի դիրք, ինչի հետ կապված՝ ներկայացնում է պատասխան հայցադիմումին, իրավունք ունի ներկայացնելու իր փաստարկները և պատկերացումները, անել միջնորդություններ, ուսումնասիրել ապացույցները, կատարել այլ գործողություններ: Պատասխանողը նաև կարող է պաշտպանվել

\*Մկիզբը՝ նախորդ համարում



ակտիվորեն, հակընդդեմ հայց հարուցելու ճանապարհով, որը ներկայացվում է հայցադիմումի ներկայացման համար սահմանված ընդհանուր կանոններով: Այդպիսով, պատասխանողը և հայցվորը փոխվում են դերերով: Պաշտպանության նշված եղանակները հնարավոր է միաժամանակ օգտագործել:

Նախագծում կարելի է ընդգծել դատաքննության հետևյալ փուլերը. ապացույցների հետազոտման փուլ, դատական վիճաբանություններ, գործի ըստ էության քննության ավարտ:

Ապացույցների հավաքումը և ներկայացումը դատական ապացուցման անհրաժեշտ տարր է: Գործին մասնակցող անձանց համար դա նաև մրցակցության կարևոր տարր է: Մակայն ապացուցման հետ կապված նրանց իրավունքները ապացույցներ ներկայացնելով, այլ անձանց կողմից ներկայացված ապացույցների մասին տեղեկանալով, դրանց պատճենները ստանալով, ապացույցներ պահանջելու նպատակով դատարանին միջնորդելով չեն ավարտվում: Նրանք նաև օժտված են ապացույցների հետազոտմանը մասնակցելու, վկաներին և փորձագետներին հարցեր առաջադրելու, իրենց փաստարկները և պատկերացումները ներկայացնելու իրավունքով՝ այն բոլոր հարցերի հետ կապված, որոնք առաջանում են ապացույցների հետազոտման գործընթացում:

Գործի դատաքննության ընթացքում դատարանն անմիջականորեն հետազոտում է յուրաքանչյուր ապացույց, որոնք ներկայացված են ինչպես ի հաստատումն հայցադիմ պահանջների, այնպես էլ՝ դրանց դեմ ներկայացված առարկությունների: «Անմիջական» բառը հարկավոր է հասկանալ տառացիորեն. դատարանը լսում է վկաների ցուցմունքները, գործին մասնակցող անձանց բացատրությունները, զննում է իրենց ապացույցները, ծանոթանում է գրավոր ապացույցների հետ, լսում է աուղիործայնագրությունները:

Ենթադրվում է, որ գործի քննության ընթացքում ծագող ցանկացած հարց պետք է ենթակա լինի կողմերի պարտադիր քննարկման: Ակտիվ մասնակցությունն ապացույցների հետազոտմանը կողմերին հնարավորություն է տալիս ապացուցել իրենց դիրքորոշման ճշմարտացիությունը: Միաժամանակ, նախագծի այդ դրույթները դատարանի կողմից գործի օբյեկտիվ քննության երաշխիք են հանդիսանում: Խոսքը դատաքննության ընթացքում կողմերի և դատարանի՝ միմյանց գործունեության նկատմամբ արդյունավետ փոխադարձ վերահսկողության մասին է: Գործին մասնակցող անձի հայտարարությունը՝ գործին մասնակցող այլ անձի ներկայացրած ապացույցը կեղծված լինելու մասին, այդպիսի վերահսկողության ձևերից մեկն է: Ընդ որում, անհնար է թվում սահմանել այդպիսի դիմումը որպես դատավարական մրցակցության ձև, քանի որ ապացույցների կեղծման վերաբերյալ դիմումն ունի որոշակի հետևանքներ, այդ թվում՝ քրեաիրավական: Կարելի է խոսել միայն գործին մասնակցող անձանց փոխադարձ վերահսկողության մասին: Անձը, որը ներկայացրել է վիճելի ապացույց, կարող է համաձայնվել այդ ապացույցը որպես ապացույց չդիտելու հետ, բայց նաև իրավասու է պնդել այն գործի նյութերին կցելու և մյուս ապացույցների հետ գնահատելու հարցերի վերաբերյալ: Այդ դեպքում տնտեսական դատարանի մոտ ծագում է ապացույցների կեղծման վերաբերյալ դիմումի իսկության ճշտման համար ինքնուրույն միջոցներ ձեռնարկելու իրավունք: Դատարանը կարող է իր նախաձեռնությամբ նշանակել փորձաքննություն, պահանջել ապացույցներ, ձեռնարկել այլ միջոցներ:

Մրցակցության սկզբունքը դատարանին հնարավորություն է տալիս գործի հանգամանքների վերաբերյալ կազմել լրիվ և բազմակողմանի պատկերացում և ընդունել ճիշտ որոշում: Նախագիծը, գործի քննության ընթացքում բոլոր հարցերի հետ կապված, կողմերին իրավունք է վերապահում արտահայտել իրենց տեսակետները՝ ընդհուպ մինչև դատաքննության ավարտը: Գործին մասնակցող անձինք այդ առումով ոչ միայն սահմանափակված չեն, այլև, ընդհակառակը, մի քանի դեպքերում դատարանն այս կամ այն հարցով որոշում կայացնել չի կարող՝ առանց լսելու կողմերի կարծիքները, օրինակ՝ գործը դատաքննությանը նախապատրաստված ճանաչելու, դատական վիճաբանություններին անցում կատարելու հնարավորության և այլն:

Ապացույցների հետազոտման ավարտից հետո դատարանը գործին մասնակցող անձանցից պարզում է, թե չե՞ն ցանկանում նրանք, արդյոք, ինչ-որ բանով լրացնել գործի նյութերը, և միայն այդպիսի դիմումների բացակայության դեպքում անցնում է դատական վիճաբանություններին: Դատական վիճաբանությունները դատավարության համար նոր ինստիտուտ են, դատաքննության ինքնուրույն փուլ, ինչն իրենից ներկայացնում է գործին մասնակցող անձանց և նրանց ներկայացուցիչների մտքերի բանավոր փոխանակում՝ ի հիմնավորումն իրենց դիրքորոշման: Դատական վիճաբանությունը գործին մասնակցող յուրաքանչյուր անձի դիրքերից (տեսակետից) ամփոփում է դատաքննության արդյունքները: Համեմատելով գործին մասնակցող անձանց մտքերը և փաստաթղթերը՝ դատարանը կարող է ընդգրկել դատաքննությունն ամբողջությամբ և ընդհանրացնել իր եզրակացությունները:

Նախագծում դատավարական վիճաբանության անցկացման կարգը մույնպես հետևողականորեն կարգավորված է, սահմանված է վիճաբանության մասնակիցների ելույթների որոշակի հերթականություն: Այդ կարգն ապահովում է կողմերից յուրաքանչյուրի համար մյուս կողմի փաստարկները և առարկությունները վիճարկելու, հստակեցնելու և վերջնական ձևով դատարանին վիճելի հարցերի հետ կապված իր տեսակետը շարադրելու հնարավորություն: Նախագիծը վիճաբանության մասնակիցների ելույթների համար չի սահմանում ժամանակային ինչ-որ սահմանափակում: Այնուամենայնիվ, իրենց ելույթների ընթացքում գործին մասնակցող անձինք իրավունք չունեն հեմվել չպարզաբանված հանգամանքների և դատական նիստում չհետազոտված ապացույցների վրա: Մրա հետ կապված՝ դատա-

բանին իրավունք է տրված վերահսկելու ապացույցների հետազոտումը, եթե վիճաբանությունից առաջ և հետո այն կհանգի նոր հանգամանքների կամ լրացուցիչ ապացույցների պարզաբանման անհրաժեշտության վերաբերյալ եզրակացության:

Անհրաժեշտ է մի քանի խոսք ասել գործին մասնակցող անձանց կողմից դատավարական գործողությունների կատարման կամ դրանց չկատարման հետևանքների մասին: Իրավունքներից, որոնք նախագիծը տրամադրում է դատավարության մասնակիցներին, վերջիններս պարտավոր են օգտվել բարեխղճորեն: Համաձայն նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում ամրագրված դրույթի՝ գործին մասնակցող անձինք կրում են իրենց կողմից դատավարական գործողություններ կատարելու կամ չկատարելու հետևանքների ռիսկը: Ընդ որում, պարտադիր չէ, որ հետևանքները լինեն անբարենպաստ: Մասնավորապես, տնտեսական դատարանի դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված գործին մասնակցող անձի չներկայանալու դեպքում դատարանն իրավունք ունի գործը քննել նրա բացակայությամբ: Մակայն դատական ակտը կարող է ընդունվել նաև հօգուտ չներկայացած կողմի, չնայած այն բանին, որ դատարանն իրավասու է նրա գործողությունները որակել որպես իրավունքի չարաշահում:

Հարկ է ուշադրություն դարձնել նախագծում հայցադիմումն առանց քննության թողնելու դրույթի բացակայությանը, եթե հայցվորը չի ներկայացել տնտեսական դատարանի դատական նիստին և չի խնդրել գործն իր բացակայությամբ քննելու մասին (համապատասխան նորմ նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով): Հայցվորի այդպիսի գործողությունը, ըստ էության, իրենից ներկայացնում է հրաժարում իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունից: Կողմի այդպիսի վարքագծի հետևանքներից (բայց ոչ պարտադիր) կարող է լինել ոչ իր օգտին դատական ակտի կայացումը: Ընդ որում, դատավարությունը չի կորցնում իր մրցակցային բնույթը, քանի որ հայցվորի դիրքորոշումը հիմնավորված է հայցադիմումում, իսկ պատասխանողն այն առարկելու, իր փաստարկները և պատկերացումները արտահայտելու հնարավորություն ունի: Այն անձանց, որոնց ներկայությունը դատական նիստում ՏԴՕ նախագծի նորմերին համապատասխան ճանաչվել է պարտադիր, բացակայությունը կհանգեցնի բացասական հետևանքների, հատկապես՝ տուգանքի նշանակում: Օրենսգրքով սահմանված կարգով և չափով:

Դատական ծախսերի հետ կապված դրույթներն այնքանով են վերաբերում մրցակցության հարցերին, որքանով փորձաքննության վճարման, վկաներին կանչելու, ապացույցների՝ տեղում զննության և այլ ծախսերը՝ կապված կողմերի և դատարանի ապացուցողական գործողությունների հետ: Այդ ծախսերը բաշխվում են կողմերի վրա, բացառությամբ նախագծով ուղղակի նախատեսված դեպքերի: 108-րդ հոդվածին համապատասխան՝ փորձագետներին, քարզմանիչներին և վկաներին վճարման



ենթակա դրամական միջոցները տնտեսական դատարանի կողմից սահմանված ժամկետում մուտքագրվում են դատարանի դեպոզիտային հաշվին համապատասխան միջնորդություն ներկայացրած անձի կողմից: Եթե նշված միջնորդությունը ներկայացնում են երկու կողմերը միաժամանակ, ապա պահանջվող գումարները տնտեսական դատարանի դեպոզիտային հաշվին են մուտքագրվում հավասար մասերով: Այն դեպքում, երբ տնտեսական դատարանի կողմից սահմանված ժամկետում փորձագետներին, թարգմանիչներին և վկաներին վճարման ենթակա գումարները չեն մուտքագրվել դատարանի դեպոզիտային հաշվին, տնտեսական դատարանն իրավունք ունի մերժել փորձաքննություն նշանակելու և վկաներին կանչելու մասին միջնորդությունը, եթե գործը կարող է քննվել և գործով որոշում կայացվել կողմերի ներկայացրած այլ ապացույցների հիման վրա: Այսպիսով, ապացուցողական նյութի լրիվությունը, որոշակի առումով, որոշվում է կողմի՝ փորձաքննության կամ վկայի կանչման համար ծախսերի վճարման ֆինանսական հնարավորությամբ: Տվյալ հարցի լուծումը կախված է դատարանից. վերջինս իրավունք ունի գործը քննել այլ ապացույցների հիման վրա կամ, այնուամենայնիվ, նշանակել փորձաքննություն, կամ կանչել վկա՝ դրանց ծախսերը գանձելով այն կողմից, որի դեմ կկայացվի դատական ակտը:

ՏԴՕ նախագիծը պարունակում է նորմեր, որոնք կարելի է դիտարկել որպես մրցակցության սկզբունքի գործողության որոշակի սահմանափակում: Դա վերաբերում է, մասնավորապես, հայցի ապահովման ինստիտուտին: Ապահովման միջոցները ձեռնարկվում են շատ կարճ ժամկետներում. հայցի ապահովման վերաբերյալ դիմումը քննարկվում է ոչ ուշ, քան դիմումը տնտեսական դատարանում ստացվելու հաջորդ օրը: Ընդ որում, գործին մասնակցող անձինք չեն ծանուցվում դիմումի քննության ժամանակի և վայրի մասին, միայն ոչ ուշ, քան այն կայացնելու օրվան հաջորդող օրը ուղարկվում են հայցի ապահովման մասին որոշման պատճենները: Այդպիսի սահմանափակումների համար բավարար հիմք է ապահովման միջոցների բնույթը. առաջին, դրանք ժամկետային միջոցներ են, երկրորդ, ժամանակավոր են: Այդ պատճառով պատասխանողի իրավունքները՝ իմանալու մյուս կողմի հայցի ապահովման վերաբերյալ դիմումի ներկայացման, դատարանում լաված լինելու և այդպիսի միջոցների դեմ առարկելու մասին, ժամանակավորապես սահմանափակվում են: Տվյալ դեպքում մրցակցության սկզբունքի ձևական պահպանումը կիմաստագրվեր ապահովման միջոցների ձեռնարկումը, քանի որ պատասխանողի տեղեկացվածությունն այդպիսի միջոցների ձեռնարկման մասին դիմումի վերաբերյալ, նույնիսկ այդ դիմումի քննարկման կարճ ժամկետների դեպքում, կարող է հանգեցնել ապահովման միջոցների ձեռնարկման վերաբերյալ որոշման (իսկ հետագայում՝ բուն դատական ակտի, որով ըստ էության, ավարտվում է գործի քննությունը), կատարման դժվարությունների կամ անհնարինության:

Պատասխանողի պաշտպանության մի-

ջոցն ապահովման միջոցների ձեռնարկման դեմ դա հակընդդեմ ապահովումն է և հետագայում հայցի ապահովման պատճառով վնասների փոխհատուցման (վերականգնման) հնարավորությունը: Բացի դրանից, պատասխանողը կարող է դիմել տնտեսական դատարան՝ ապահովման միջոցների վերացման կամ մեկ ապահովման միջոցը մյուսով փոխարինելու վերաբերյալ դիմումով: Այդպիսի դիմումները, կապված դրանց ժամկետայնության հետ, տնտեսական դատարանում քննարկվում են կարճ ժամկետներում՝ առանց կողմերի ծանուցման:

Նախագիծը մտցնում է հակընդդեմ ապահովման հասկացությունը: Հակընդդեմ ապահովումն իրենից ներկայացնում է պատասխանողի համար ապահովման միջոցների ձեռնարկման արդյունքում հնարավոր վնասների հատուցման ապահովում (այս դեպքում հակընդդեմ ապահովումը ներկայացվում է հայցվորին): Նաև հակընդդեմ ապահովումը կարող է ուղղվել հայցվորի պահանջների ապահովմանը, եթե հակընդդեմ ապահովումը ներկայացնում է պատասխանողը՝ ապահովման միջոցների փոխարեն: Ապահովումը ներկայացվում է տնտեսական դատարանի դեպոզիտային հաշվին՝ դրամական միջոցների մուտքագրման կամ նույն գումարի չափով բանկային երաշխիքի, երաշխավորության կամ այլ ֆինանսական ապահովման ձևով: Հակընդդեմ ապահովման չափը սահմանվում է հայցվորի գույքային պահանջների, ինչպես նաև այդ պահանջների տոկոսների գումարի սահմաններում: Այդ չափը չի կարող պակաս լինել հայցվորի գույքային պահանջների կեսի չափից: Պատասխանողի կողմից հակընդդեմ ապահովման կատարումը հավաստող փաստաթուղթ ներկայացնելը հիմք է հայցի ապահովումը մերժելու կամ այն վերացնելու համար:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ տնտեսական դատարանը իրավասու է առաջարկել հայցվորին տրամադրել հակընդդեմ ապահովում կամ պահանջել դրա տրամադրում, եթե այդպիսի միջնորդություն է արել պատասխանողը: Հակընդդեմ ապահովման չտրամադրումը կարող է հիմք ծառայել հայցի ապահովման վերաբերյալ դիմումի մերժման համար:

Նախնական ապահովման միջոցներն ուղղված են, նախևառաջ, կողմերի շահերի հավասարակշռությանը, այսպես կոչված՝

ա -ի պահպանմանը: Դրանք միջոցներ են, որոնք ուղղված են դիմողի գույքային շահերի ապահովմանը մինչև հայցի հարուցումը: Այդպիսի միջոցների ձեռնարկումն իրականացվում է նախագծի 8-րդ գլխի դրույթներին համապատասխան, որը կարգավորում է հայցի ապահովման հարցերը:

Այսպիսիք են ՀՀ տնտեսական դատարանի օրենսգրքի նախագծի հիմնական դրույթները, որոնք ապահովում են մրցակցության սահմանադրական սկզբունքի իրագործումը տնտեսական դատավարությունում:

<sup>5</sup>Тараненко В.О. Принципы диспозитивности и состязательности в гражданском процессе. М., 1990, с.37.



Իրավաբանական գիտությունների դոցենտ



Արի հասվում են ներգործ Ահաբեկ որպես է

տանգության դեմ ուղղվածություն: Ահաբեկչության տը հասարակական անլրացուցիչ օբյեկտներն են առողջությունը, սեփական և տեղական իշխանորմալ գործունեություն:

Խորհրդային քրե «ահաբեկչություն» երևույթ պետական իշխան չի, հասարակական գորյա պետության ներկայնը՝ խորհրդային իշխան կամ քայքայելու, պատե կամ միջազգային բարդ նելու նպատակով (ՀԽՍ քի 61 և 62 հոդվածներ):

Այժմ տրվում է ահրավական այլ բնութաքրեական օրենսգրքի 21 քրեական օրենսգրքի 20 բեկչությունը պայթյուն, կային զոհեր առաջ բերվմաս պատճառող կամ վոր այլ երևույթների սստեղծող գործողություն կատարելու սպառնալիտարվել են հասարակա նը խախտելու, բնակչո կամ պետական մարմնի անձի որոշման ընդունմ կամ հանցավորի ապո կատարելու նպատակով

Ահաբեկչությունը հվտանգության դեմ ուղյթյուն է:

Ըստ Վ. Վ. Ուստինո անվտանգությունը հասրությունների բարդ հաբեկչական ակտերը ոտկական անվտանգությսվտանգել քաղաքական մակարգերը, պետությա կարգի հիմունքները, իշ ների նորմալ գործունե կյանքն ու առողջութապահովությունը, հասս կանությունը, իսկ մի շս

\*Մկիզբը՝ նախորդ համ